

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Բուժաշխատողի օրվա կապակցությամբ

21.06.2017



Հարգելի բուժաշխատողներ:

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ մասնագիտական տոնիկապակցությամբ:
Բժշկի մասնագիտությունն ամենամարդասիրական մասնագիտությունն է, քանզի
մարդու առողջության պահպանման կարևորագույն գործն իրականացնում են բժիշկները և առողջապահության
ոլորտի մյուս աշխատողները:

Դուք եք հույս ներշնչում օգնության կարիք ունեցող հիվանդներին՝ հավատալու հիվանդությունը
հաղթահարելու դժվարին ճանապարհի վերջին ակնկալվող լույսին: Դուք
եք կյանք պարզևում մարդկանց, ապահովելով լույս աշխարհ եկող մանուկների ու նրանց լույս աշխարհ բերող մ
այրերի կայուն առողջությունը: Յուրաքանչյուր անձաշխարհ գալու իր առաջին ճիշն արձակում է ուղղակիորեն ձ
եք հոգատար ավերի մեջ:

Մասնագիտական տոնը ևս մեկ առիթ է, գնահատելու և շնորհակալության խոսքեր ասելու ձեզ՝ ձեր անքուն
գիշերների և հիվանդի կյանքի համար մղվող տագնապով լեցուն անցկացրած յուրաքանչյուր վայրկյանի
համար: Շնորհակալություն Ձեզ, ամենաշնորհակալ Ձեր գործունեության համար:

Ցանկանում եմ սիրով ու խորին հարգանքով մասնագիտական տոնի կապակցությամբ առաջնահերթորեն
առողջություն մաղթել հենց ձեզ, որպեսզի դուք կարողանաք լիարժեքորեն իրականացնել
ամենամարդասիրական ու պատասխանատու առաքելությունը՝ մարդկանց առողջության պահպանումը:

Վայոց ձորի մարզի հարգելի բուժաշխատողներ, համոզված եմ, որ դուք անելու եք հնարավոր ամենբան, մեր մար
զի ազգաբնակչության բուժսպասարկումը պատշաճորեն իրականացնելու, ինչպես նաև սպասարկման ծառայությ
ունների որակը շարունակական կերպով բարելավելու նպատակով:

Դուք էլ համոզված եղեք, որ մարզային իշխանություններն էլ իրենց հերթին,
օգտվելով առողջապահության բնագավառում նախատեսված ՀՀ
կառավարության բարեփոխումների ծրագրի շնորհիվ հնարավորությունից, հնարավոր բոլոր քայլերը
կձեռնարկեն՝ Վայոց ձորի մարզային առողջապահական կազմակերպություններում աշխատանքային
պայմանները բարելավելու և դրանք բժշկական ժամանակակից սարքավորումներով վերազինելու ուղղությամբ:

Հարգելիներս, կրկին շնորհավորում եմ ձեզ Բուժաշխատողի օրվա կապակցությամբ և մաղթում եմ առողջություն
ու անձնական երջանկություն, աշխատանքային հաջողություններ և մասնագիտական նորանոր ձեռքբերումներ: